


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԼՈՒՍՀՐԱՏ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

հջ	տպված է	պետք է լինի
10 վ. 2 առդ	Զորքորդ դասարան	Յերրորդ դասարան
20 վ. 20 »	կաթնանասնադահուկություն	կաթնանասնադահուկություն
23 վ. 14 »	Կազախական	Հազախական
24 վ. 5 »	զորութիւն	չորութիւն

Քարգմ. խմբ. Ն. Մ ա ն ո յ ա ն
Տեխ. խմբագիր Չ. Մ ա ռ ա լ խ յ ա ն

Մրբագրիչ Մ. Հ ա խ ն ա ղ ա ռ յ ա ն

Կոնսրուկտոր Ս. Մ ա լ խ ա ս յ ա ն

Գլխավոր լրագրող Ն. 6670 պատվեր № 504, արժեք 4000

Պետ. Համալսարանի Հրատարակչության Տպարան, Յերեվան

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ¹

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Տարրական և միջնակարգ դպրոցներում աշխարհագրության դասավանդման հիմնական խնդիրները սահմանվեցին ՀԱՄԿ (բ) Կ Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ի «Տարրական ու միջնակարգ դպրոցի ծրագրերի ու ռեժիմի մասին» վորոշումով:

Այս վորոշման մեջ ասված է. «Աշխարհագրությունից ծրագիրը պետք է ապահովի քարտեզի, առանձնապես ԽՍՀՄ քարտեզի ճանաչումը, ֆիզիկական աշխարհագրության հիմնական դադափարների ճանաչումը, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ի, այնպես ել նրա յուրաքանչյուր հանրապետության, յերկրամասի ու մարզի ֆիզիկական, րնական ու տնտեսական աշխարհագրության հիմնական տարրերի իմացումը. աշխարհագրության ուսուցման ծրագրում պետք է պատշաճ ծավալով գիտելիքներ մտցվեն կապիտալիստական յերկրների աշխարհագրությունից»:

Այնքան, վորքան աշխարհագրության դասավանդման բնույթը շարունակում եր մնայ անրավարար, դրան հետևեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԱՄԿ (բ) Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի նոր վորոշումը՝ «ԽՍՀՄ տարրական և միջնակարգ դպրոցներում աշխարհագրության դասավանդման մասին»:

«ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը և ՀամԿ (բ) Կ Կենտկոմը հաստատում են, վոր աշխարհագրության դասավանդումը տարրական և միջնակարգ դպրոցներում եյական թերություններ ունի, վորոնցից խոշորագույններն են. շարադրանքի վերացականությունն ու չորությունը, ֆիզիկական աշխարհագրության նյութի պակասությունը, քարտեզով թույլ կողմնորոշվելը, աշխար-

¹ Ծրագրի կազմելու մեջ մասնակցել են պրոֆ Ա. Ս. Բարկովը, պրոֆ. Ա. Ա. Պալավինկինը, և ընկ. ընկ. Կ. Ա. Սոնգալյուն, Լ. Գ. Տերեխովը, և Վ. Գ. Երզնկին:

Ծրագիրը խմբագրված է ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

հագրութեան դասավանդման և դասագրքերի ծանրաբեռնվածութիւնը վիճակագրական-տնտեսական նյութով և ընդհանուր սխեմաներով, վորի հետեանքով սովորողները դուրս են գալիս դպրոցից հաճախ չտիրապետելով տարրական աշխարհագրական գիտելիքներին»:

Նշած բացերը վերացնելու համար ԽՍՀՄ ԺԿԽ-ն և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկեցին առաջնորդվել հետևյալ գրույթներով. «Տարրական դպրոցում (3-րդ և 4-րդ դասարաններ) աշխարհագրութիւնը դասավանդելիս ապահովել, վոր աշակերտների հիշողութեան մեջ ամուր մնան հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, գետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և աշակերտները լավ գիտենան աշխարհագրական քարտեզը՝ ծրագրով հաստատված սահմաններում, շարադրանքը դարձնելով ավելի դիտողական, մատչելի, հանրամատչելի և գրավիչ»:

Կուսակցութեան և կառավարութեան վերը թված վորոշումներից տարրական դպրոցին վերաբերվում են հետևյալ գրույթները:

1. Աշխարհագրութիւնը պետք և լինի տարրական դպրոցի հիմնական ուսումնական առարկաներից մեկը:

2. ԽՍՀՄ աշխարհագրութիւնը տարրական դպրոցի աշխարհագրութեան գասընթացում պետք և գրավի ակնառու տեղ:

3. Աշակերտների գիտելիքներն աշխարհագրութիւնից պետք և անքակտելի կերպով կապված լինի քարտեզի հետ:

4. Ուսումնական նյութի ընտրութեան և դասավանդման մեթոդների սահմանման մեջ պետք և հաշվի առնվեն տարրական դպրոցի աշակերտութեան տարիքային առանձնահատկութիւնները:

Յերոզդ գլխաւորում աշխարհագրութեան դասընթացն ունի ներածական կամ պրոպեդեւտիկ բնույթ: Այս դասարանի դասընթացի խնդիրներն են հանգիստն ունի:

— Տալ յերեխաներին ֆիզիկո-աշխարհագրական յերեւութների վառ նկարագրութիւնը. բերել որինակներ, թե ինչպես և մարդկային հասարակութիւնն ոգտագործում բնական պայմանները, յերեխաների հատուկ ուշադրութիւնը բեկեռելով մարդու վերակառուցող, կերպարանափոխող գերի վրա մեր սոցիալիստական հայրենիքի պայմաններում. ապահովել, վոր աշակերտները հստակ կերպով իմանան ավելի հաճախ դրժածվող աշխարհա-

գրական տերմինները. յերեխաներին ըմբռնելի դարձնել պլանը և քարտեզը:

Վերը դրած խնդիրներին իրագործումը կախված և ուսուցման պրոցեսում մի շարք պայմանների կիրառումից:

Ուսասիւելով այնպիսի բացատրութիւնից, վոր անմատչելի յե մանկական ըմբռնմանը, իսկ մյուս կողմից խուսասիւելով գրեւեկացումից, այսինքն չափից դուրս պարզեցրած, վոչ գիտական բացատրութիւններից, ուսուցիչը չպետք և իր դասը սահմանափակի միայն նկարագրական աշխարհագրութեամբ: Յերեխաների կողմից միմիայն աշխարհագրական փաստերի թվարկման ուսումնասիրութիւնը, փաստեր, վորոնք չեն դրված փոխադարձ կախվածութեան մեջ, կլինի մի այնպիսի դասավանդութիւն վոր նշանակալի չափով դուրկ և կրթական դաստիարակչական նշանակութիւնից: Աշխարհագրական փաստերի չոր ու ցամաք նկարագրութիւնը չի կարող ապահովել աշակերտների մեջ մատերիալիստական աշխարհըմբռման սկզբնավորութեան ձեւավորումը: Բացի դրանից, միմիայն չոր փաստերի թվարկմամբ տարվող աշխատանքը չի կարող հետաքրքրութիւն առաջացնել երեխաների մեջ գեպի աշխարհագրութիւնը, քանի վոր յերեխաների բնական հետաքրքրութիւնը չի ստանա բավարարութիւն:

Յերեխաներին աշխարհագրական տերմինոլոգիայի հետ ծանոթացնելու ժամանակ միանգամայն անթույլատրելի յե տալ պատրաստի սահմանումներ կամ վերացական սխեմաներ: Տերմինների գիտակցական յուրացումը կատարվում և համապատասխան կոնկրետ պատկերացումների նախնական կուտակման միջոցով: Ուսուցչի ղեկավարութեամբ մի շարք կոնկրետ պատկերացումների համեմատութիւնն ու հակադրութիւնը կողմի յերեխային գիտակցութիւն ընդհանրացնել նրանց և միայն այս բավականի յերկար մտածողական պրոցեսից հետո յերեխան կսկսի ամբողջութեամբ հասկանալ իմաստն այնիսի բառերի, ինչպիսիք են որինակ՝ դաշտավայր, բարձրութիւն և այլն:

Յերեխաներին հասցնել այն բանին, վոր նրանք ըմբռնեն պլանը և քարտեզը, իրենից ներկայացնում և յերբորդ դասարանի դասընթացի ամենապատասխանատու և դժվարին խնդիրը: Այդ խնդիրը լուծվում և աստիճանաբար, ծրագրի բոլոր թեմաների դասավանդման ընթացքում, սակայն, այնուամենայնիվ,



11-2876399

աշխատանքի հիմնական մասն ընկնում է առաջին կիսամյակի վրա (թեմաներ—«Կողմնորոշում տարածության մեջ», «Յերկրի մակերևույթի ձևերը», «Ստորերկրյա և մակերեսային ջրեր», «Առաջին ծանոթություն քարտեզին»)։ Այստեղ այդ խնդրի իրագործումը կատարվում է հետեւյալ հտապներով։

1. Յերեխաների կողմից վորոշված ուղղությունների և յերեխաների կողմից չափված հեռավորությունների նշանակումը թղթի վրա—պրակտիկ աշխատանքներ կատարելու միջոցով։

2. Այնպիսի նկարների համեմատում, վորոնք պատկերում են վայրի մի փոքր մասը կողքից և վերից՝ նույն վայրի պարզ պլանի հետ

3. Իր ապրած վայրի պարզեցրած պլանի համեմատումն իրականության հետ։

4. Տեղագրական պլանի պայմանական նշանների ըմբռնումը վայրում համապատասխան աշխարհագրական որչեկտների հետ՝ ունեցած նախնական և անմիջական ծանոթացման հիման վրա։ Ծայրահեղ դեպքում, վայրի անմիջական ուսումնասիրությանը կարող է փոխարինել նկարների և պատկերների ոգտագործումը։

5. Տեղագրական պլանի վրա մեծ քանակությամբ վարժություններ և խնդիրների լուծելը։

6. Տեղագրական պլանից անցում դեպի քարտեզի պայմանական նշանները, համեմատության մեջ դնելով յերեխաներին արդեն ծանոթ տեղագրական պլանի պայմանական նշանների հետ։

7. Քարտեզի պայմանական լեզուն կենդանացնել այնպիսի գեղարվեստական նկարագրությունների և նկարների ոգնությամբ, վորոնք վերաբերում են քարտեզի մի վորոշակի վայրին։

Այնքան, վորքան յերրորդ դասարանում աշխարհագրության ուսուցումը հիմնվում է առաջին հերթին կենդանի, կոնկրետ նյութի վրա, դասավանդման հաջողության տեսակետից մեծ նշանակություն ունի թեմաների անցման ժամանակ գավառագիտական մոտեցումը։ Այդպիսի թեմաներից են՝ «Յերկրի մակերևույթի ձևերը», «Ստորերկրյա և մակերեսային ջրեր», «Յերկրի վրա ապրող կենդանիները»։ Այստեղից էլ բխում է երկրաբանների և բնության ու յեղանակների դիտողության միանգամայն անհրաժեշտությունը—առանձին դեպքերում ինչպիսի դժվարությունների հետ էլ վոր կապված լինի այդ գործի կազմակերպչական կողմը։ Յերեխային շատ հեշտ կլինի ծանոթից և տեսա-

ծից անծանոթին ու հեռավորին անցնել, վորոնց մասին ուսուցիչը կարող է հաղորդել՝ ոգտագործելով միայն աշխարհագրական նկարը, աշխարհագրական նկարագրությունը, աշխարհագրական քարտեզը։

Յերրորդ դասարանի աշխարհագրության դասընթացը յերեխաներին վոչ միայն գիտելիքներ է հաղորդում այլ և մշակում է նրանց մեջ մի շարք ունակություններ, ինչպես որինակ՝ կողմնորոշել տարածության մեջ արևով և կողմնացույցով, կարողանալ գտնել ուղղությունները, ինչպես և ոգտվել տեղագրական պլանի մասշտաբով և պայմանական նշաններով։ Ուսուցիչը պետք է իմանա, վոր այս ունակությունները վոչ միայն անհրաժեշտ են աշխարհագրության հետագա ուսումնասիրման համար, այլև, բացի դրանից, ունեն յերկրի պաշտպանության տեսակետից առաջնակարգ նշանակություն խՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար։ Իրա համար էլ այս ունակությունների հաստատուն ամրացման համար անհրաժեշտ է յերեխաներին վարժեցնել համապատասխան գործնական խնդիրների լուծման մեջ։

Զորքդ դասարանի աշխարհագրության դասընթացը նպատակ ունի ծանոթացնել յերեխաներին խՍՀՄ աշխարհագրությանը և շատ համառոտ՝ կապիտալիստական աշխարհի կարևորագույն յերկրները աշխարհագրությանը։

Ի տարբերություն այն պրինցիպների, ըստ վորի խՍՀՄ աշխարհագրության 7-րդ և 8-րդ դասարանների դասընթացը բաժանված է այնպիսի տարածական բաժինների, ինչպես որինակ՝ «ԽՍՀՄ Յեկրագրական մասի արևմուտքը» «ԽՍՀՄ Յեկրագրական մասի կենտրոնը» «Պովոլժիե» և ապա բաժանումն ըստ հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի, տարրական դպրոցում Խորհրդային Միության տերիտորիայի բաժանումը արվում է ըստ բնական գոտիների։ Իս հնարավորություն է տալիս խՍՀՄ աշխարհագրության տարրական դասընթացում աչքի ընկնող տեղ հատկացնել մի կողմից ֆիզիկական աշխարհագրության տարրերին, իսկ մյուս կողմից ոգնում է յերեխաներին ավելի կոնկրետ կերպով պատկերացնել մարդու տնտեսական գործունեյությունը և խՍՀՄ Սոցիալիստական շինարարությունը՝ հաշվի առնելով բնական պայմանները։

Այսպիսով խՍՀՄ աշխարհագրությունը չորրորդ դասարանում կարծես թե բաժանվում է մի շարք պատկերների, վորոնցից

յուրաքանչյուրը լցվում է կենդանի, կոնկրետ բովանդակությամբ:

ԽՍՀՄ գոտիական ուսումնասիրությունները նախորդում են «ԽՍՀՄ համառոտ տեսություններ ֆիզիկական քարտեզում» թեման:

Այսպիսի ընդհանուր տեսություն անհրաժեշտությունը բնորոշվում է նրանով, վոր մասը հնարավոր է ըմբռնել ամբողջի ֆոնի վրա: Առանձին գոտիներում միշտ է ամենուրեք ընկնում են գետերի, բարձրությունների և այլնի, այսպես ասած «կտորներ» միայն:

ԽՍՀՄ աշխարհագրության դասընթացն ավարտվում է ԽՍՀՄ համառոտ քաղաքական տեսություններ: Այսպիսով յերեխաները պետք է կարողանան այս բաժնում ցույց տալ քարտեզի վրա ԽՍՀՄ 11 միությունական հանրապետությունները, նրանց մայրաքաղաքները, միաժամանակ տալ նրանց սեղմ բնութագրությունները, հիմնված այն փաստական չափերի վրա, վոր մինչ այդ նրանք սովորել են բնական գոտիներն անցնելու ժամանակ:

4-րդ դասարանում կարևորագույն կապիտալիստական յերկրների ուսումնասիրությունները հատկացվում է քիչ ժամանակ: Դրա համար ել համառոտ, բայց կոնկրետ և պատկերավոր կերպով յերկու աշխարհները, յերկու սխեմաները հակադրելուց հետո յերեխաները քարտեզի վրա ծանթանում են գլխավորապես կարևորագույն կապիտալիստական յերկրների, նրանց մայրաքաղաքների և գաղութների տեղադրավայրին:

Մեթոդական տեսակետից 4-րդ դասարանի աշխարհագրությունը դասընթացը առանձին գծավարություններ չի ներկայացնում ուսուցչի համար: Անհրաժեշտ է սակայն ընդգծել, վոր աշխարհագրական քարտեզների վրա 4-րդ դասարանի ծրագրով սահմանված մոտ 200 անուն սովորեցնելու խնդիրը չպետք է անջատել աշխարհագրական նկարներից և աշխարհագրական նկարագրություններից: Չի կարելի սովորել քարտեզի վրա միայն մակագրություններ, վորոնք յերեխաներին վոչ մի պատկերացում չեն տալիս: Դրա համար ել աշխատանքն աշխարհագրական նկարով և աշխարհագրական նկարագրությունները պետք է մեծ մասամբ նախորդեն քարտեզի համապատասխան մանրամասնություններն ուսումնասիրելուն,

Անհրաժեշտ է հատկապես մատնանշել, վոր յերրորդ և չորրորդ դասարաններում աշխարհագրությունից անցնելիք փաս-

տական նյութերը բացառիկ հնարավորություններ են տալիս ուսուցչին աշխարհագրության դասերի ընթացքում լուծել դաստիարակչական նշանակություն ունեցող խնդիրներ, դաստիարակել յերեխաներին վորպես մարտնչող անասովածներ, վորպես լենինյան-ստալինյան աղգային քաղաքականության ջատագովներ, վորպես սոցիալիստական հայրենիքի ջերմ հայրենասերներ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Կողմնորոշում տարածության մեջ	9	ժամ
2. Ծանոթություն յերկրի մակերևույթի հիմնական ձև-վերին և տեղադրական պլանին	8	»
3. Ստորերկրյա և մակերեսային ջրեր	8	»
4. Առաջին ծանոթություն քարտեզին	4	»
5. Յերկրագունդը և նրա պատկերումը գլոբուսի և կիսագունդերի քարտեզի վրա	16	»
6. Յեղանակ և կլիմա	8	»
7. Յերկրագունդի տարբեր ջերմային գոտիների բնության և բնակչության կյանքի պատկերներ	18	»
8. Կրկնություն	10 (7)	ժամ
Ընդամենը՝		81 (78) ժամ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԽՍՀՄ համառոտ տեսություններ ֆիզիկական քարտեզով	10	ժամ
2. Բեկկոային գոտի	6	»
3. Տունդրաների գոտի	5	»
4. Տալգայի գոտի	7	»
5. Խոուն անտառների գոտի	6	»
6. Անտառատափաստանների և սեահողային տափաստանների գոտի	6	»
7. Չոր տափաստանների գոտի	4	»
8. Անապատների գոտի	5	»
9. Մերձարևադարձային գոտի	5	»
10. ԽՍՀՄ լեռնային շրջաններ	5	»
11. ԽՍՀՄ համառոտ քաղաքական տեսություններ	5	»
12. Աշխարհի քարտեզի համառոտ տեսություններ	3	»
13. Կրկնություն	14 (11)	ժամ
Ընդամենը՝		81 (78) ժամ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—փակագծերում տված ժամերը վերաբերում են քաղաքի դպրոցներին:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԿՈՂՄԵՈՐՈՇՈՒՄ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. Կեսորվա ստվերով վորոշել վայրի հիմնական ուղղութիւնները:

Ծանոթութիւն կողմնացույցի կազմութեանը: Կողմնացույցի ոգնութեամբ հիմնական ուղղութիւնները վորոշումը: Վորոշել, թե վոր ուղղութեան վրա յե գտնվում վայրի մեկ կետը մյուսին:

2. Կողմնորոշում պարզեցրած պատրաստի պլանով: հասկանալ պլանի պայմանական նշանները և մասշտաբը. պլանի ճիշտ տեղադրումը վայրի հիմնական ուղղութիւնների համեմատ. պլանի համադրումը իրականութեանը. պլանով վորոշել, թե վոր ուղղութեան և ինչ հեռավորութեան վրա յե գտնվում վայրի մեկ կետը մյուսին:

2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՆ ՅԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

1. Անմիջական ծանոթութիւն շրջապատող վայրի մակերևութի ձևերին և գյուղատնտեսական հողատեսքերին:

2. Ծանոթութիւն յերկրի մակերևութի հիմնական ձևերին՝ հարթութեանը, բլրին, լեռանը:

3. Ծանոթութիւն գյուղատնտեսական հողատեսքերի, ճանապարհների, գանազան կառուցվածքների տեղադրութեանը՝ յերկրի մակերևութի բնութիւնի առնչութեամբ: Տարրական ծանոթութիւն վայրի առանձնահատկութիւնների պատկերմանը տեղագրական պլանի վրա:

3. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՅԵՎ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԶՐԵՐ

1. Անմիջական ծանոթութիւն իր վայրի ստորերկրյա և մակերեսային շրերին:

2. Ստորերկրյա շրերի առաջացումը: Զրաւայուն և ջրաթափանց շրեր: Զրհորներ:

3. Հոսող շրեր: Աղբյուր, գետակ, գետ: Գետի և գետակի մասերը՝ ակունք, հուն, գետաբերան: Վտակներ: Գետի աջ և ձախ ափը:

4. ԼԻՃ: ԼՃԱԿ: ՃԱԿԻՃ: ԾՈՎ:

5. Ցամաքի մակերեսի փոփոխվելը ջրի դործունեութեան հետևանքով. ափերի վորոգում, ծանծաղուտների, կղզիների, թերակղզիների, ձորերի առաջացում:

6. Ինչպես և մարդը բնութիւնը յենթարկում իրեն: Տնտեսական շինարարութեան նկատմամբ ստորերկրյա և մակերեսային շրերի փաստակարար գեցութիւնների դեմ կազմակերպած պայքարի պատկերներ (պայքար ձորերի առաջացման, ափերի վորոգման, գետերի ծանծաղեցման, ճահիճների դեմ): Հոսող ջրերի ոգտադործումը տրանսպորտի լավացման (ջրանցքների), հողերի վորոգման համար և վորպես եներգիայի աղբյուր:

4. ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏԵԶԻՆ

1. Ծանոթութիւն միևնույն վայրի պատկերների պլանի և աշխարհագրական քարտեզի, ինչպես և տարբեր մասշտաբների քարտեզների վրա: Մանրամասնութիւնների կրճատումը քարտեզի վրա՝ մասշտաբը փոքրացնելով: ԽՄՀՄ քարտեզի վրա իր հանրապետութեան, իր շրջանի, իր շրջանային կենտրոնի, մոտակա խոշոր քաղաքի գտնելը: Մասշտաբով վորոշել այդ քաղաքների միջև ընկած հեռավորութիւնը:

2. Ֆիզիկական քարտեզի վրա ջուրը և ցամաքը նշանակելը: Ցամաքի մակերևութի բարձրութիւնը ծովի մակերևութից: Ֆիզիկական քարտեզի վրա մակերևութի տարբեր ձևերի նշանակումը. դաշտավայրեր, բարձրութիւններ, լեռներ, ինչպես և ծովերի տարբեր խորութիւնների արտահայտումը: Քարտեզի վրա քաղաքներ, յերկաթգծեր, գետեր և լճեր պատկերելը: (Ֆիզիկական քարտեզի վրա կարողանալ գտնել յերկրի մակերևութի հիմնական ձևերը՝ գետեր, քաղաքներ, յերկաթգծեր):

5. ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԳԼՈՐՈՒՄԻ ՈՒ ԿԻՍՍԱԳՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Ինչպես եյին մարդիկ առաջներում պատկերացում յերկրի ձևը կրօնական նախապաշարումների ազդեցութեան տակ և ինչպես նրանք համոզվեցին, վոր յերկրը գունդ է:

2. Յերկրի գնդաձևութիւնը: Յերկրի մեծութիւնը: Գլորուսը վորպես յերկրի մոդել:

3. Յերկրի որեկան պտուղյալը: Յերեկվա և գիշերվա հերթափոխությունը:

4. Բևեռներ, հասարակած: Հյուսիսային և հարավային, արեւելյան և արեւմտյան կիսագնդեր: Գտնել նրանց գլոբուսի վրա:

5. Կիսագնդերի քարտեզ: Յամաքի և ջրի բաշխումը յերկրագնդի վրա: Աշխարհամասեր՝ Յեւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա, Ավստրալիա, Անտարկտիդա:

6. Ովկիանոսներ՝ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական, Հյուսիսային Սառուցյալ: Գտնել նրանց գլոբուսի և կիսագնդերի վրա (իմանալ աշխարհամասերի և ովկիանոսների անունները, կարողանալ ցույց տալ նրանց գլոբուսի ու կիսագնդերի քարտեզի վրա, հիշել նրանց տեղագրությունը): Ծովերը վորպես ովկիանոսների մասեր:

7. Ուղղությունների վորոշումը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա:

8. Յերկրի պտուղյալը արեգակի շուրջը: Տարրական պատկերացում տարվա յեղանակների հերթափոխության մասին:

9. Ով առաջին անգամ սկսեց սովորեցնել յերկրի շարժման մասին (Կոպերնիկ, Բրուներ, Գալիլեյ): Ինչպես եր յեկեղեցին պաշարում այն գիտնականների դեմ, վորոնք պնդում էին, թե յերկիրը շարժվում է:

10. Յերկրագնդի բաժանումը հինգ ջերմային գոտիների: Չերմային գոտիները գտնել գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա: Նրանց պայմանական սահմանները (կարողանալ ցույց տալ գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա ջերմային գոտիները):

6. ՅԵՂԱՆԱԿ ՅԵՎ ԿԼԻՄԱ

(Այս թեման յուրացվում է տարեսկզբից աշակերտների կողմից յեղանակի նկատմամբ կատարած ամենորոյա պարզագույն գիտողությունների հիման վրա):

1. Ծանոթություն շրջապատող վայրի յեղանակի փոփոխության ընթացքին՝ կատարած գիտողությունների տվյալների հիման վրա (Ինչպես վերջին ամիսների ընթացքում փոփոխվել բարեխառնությունը, վեր ամիսներին ավելի հաճախ էին փչում ուժեղ քամիները և ի՞նչ ուղղություններով, վոր քամիներն էին բերում անձրև կամ ձյուն, վորոնք չոր յեղանակ):

2. Ինչու յե փոխվում ողի բարեխառնությունը: Ինչպես են առաջանում տեղումները: Ինչպես են առաջանում քամիները:

3. Յեղանակային յերեւոյթների հետ կապված կրոնական նախապաշարութեան մերկացումը: Յեղանակի գիտական նախատեսումը:

4. Տարրական պատկերացում կլիմայի մասին:

7. ՅԵՐԿՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԶԵՐՄԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՅ ԿՅԱՆՔԻ ՊՆՏԿԵՐՆԵՐ

1. Տաք գոտի: Արեւադարձային անտառների, սավանների, անապատների բնության պատկերներ: (Կարողանալ ցույց տալ կիսագնդերի քարտեզի վրա խոշորագույն արեւադարձային անտառների և սավանների ու անապատների տեղագրավայրը): Տաք գոտու բնակչության կյանքի պատկերներ:

Տաք գոտու բնական հարստությունները: Այս յերկրների հափշտակումը կապիտալիստական պետությունների կողմից: Հարստությունների գիշատիչ կերպով վոչնչացումը, բնակչության ստրկացումն ու հարստահարումը:

2. Յուրս գոտի: Սառույցներով ծածկված տարածություններ, այդ վայրերի դժվար յուրացումը մարդու կողմից:

Տունդրայի բնության և բնակչության կյանքի պատկերներ (կարողանալ ցույց տալ գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա տունդրային շերտի ազդեցությունը):

Կապիտալիստական յերկրների բեռնային տիրապետությունների բնակչության անուշադրության մատնված վիճակը և, դրան հակառակ, մշտական ոգնություն ԽՍՀՄ բեռնային կղզիներին վրա բնակվող բնակիչներին՝ կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության կողմից դաժան բնության դեմ նրանց մղած պայքարում:

3. Բարեխառն գոտի: Անտառային շերտի, տափաստանային շերտի և մերձ արեւադարձային շերտերի բնության պատկերները:

Ի՞նչ ժողովուրդներ են ապրում Հյուսիսային բարեխառն գոտում և ի՞նչ պետություններ են այնտեղ գտնվում: ԽՍՀՄ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Ճապոնիա, Չինաստան (իմանալ այս պե-

տություններն անունները և կարողանալ ցույց տալ նրանց կիսազնգների քաղաքական քարտեզի վրա)։

Աշխատավորութեան կյանքի պատկերները ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում։

ՁՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԽՍՀՄ ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԱՐՏԵԶՈՎ

1. Վորոշել կիսազնգների քարտեզի և ԽՍՀՄ քարտեզի վրա. թե՛ վոր կիսազնգներում և վոր աշխարհամասերում և տեղադրված ԽՍՀՄ-ն։

2. Մեր Միութեան տարածութիւնը։

3. ԽՍՀՄ ծովային սահմանները։ ԽՍՀՄ-ի վորոշող ովկիանոսներն ու ծովերը։ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս, Բարենցի ծով, Սպիտակ ծով։ Խաղաղ ովկիանոս, Բերինգի ծով, Ռիտտի ծով, Ճապոնական ծով։ Կասպից ծով։ Ատլանտյան ովկիանոս, Ազովի ծով, Սև ծով, Բալթիկ ծովի Ֆիննական ծոց։

ԽՍՀՄ-ի ափերի կղզիները՝ Նոր Յերկիր, Սալալինա, Թերակղզիները՝ Կուրա, Կամչատկա, Դրիմ (իմանալ հիշատակված ծովերի կղզիների և Թերակղզիների անունները և կարողանալ հիշտ ցույց տալ քարտեզի վրա)։

4. ԽՍՀՄ ցամաքային սահմանները։ Կարողանալ ցույց տալ քարտեզի վրա սահմանները՝ Ֆինլանդիայի, Նատոնիայի, Լատվիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Թուրքիայի, Իրանի, Ավղանստանի, Չինաստանի (այդ թվում նաև Ճապոնիայի կողմից բռնազբաղված Մանջուրիայի), Մոնղոլիայի և Տուվայի ժողովրդական հանրապետութիւնների ու Ճապոնիայի հետ։ ԽՍՀՄ-ն կապիտալիստական պետութիւնների շրջապատում։ Ծովային և ցամաքային սահմանների պաշտպանութիւնը։

5. Խորհրդային Միութեան մակերևութի ընդհանուր բնութագրութիւնը (համառոտ)։ Դաշտավայրերը. Արևելա-Յեվրոպական, Արևմտա-Սիբիրական, Թուրանի, Գուռի և Ռիտնի։

Բարձրութիւններ. Միջին Ռուսական, Մերձ Վոլգյան, Դոնեցի բլրաշարը, Միջին-Սիբիրական, Հայկական լեռնաշխարհ։

Լեռներ. Ուրալյան, Կովկասյան, Պամիր, Տյան-Շան, Ալտայյան, Փոքրիկ Կովկասի (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա)։

6. Գետեր՝ Վոլգա, Դոն, Դնեպր, Հյուսիսային, Դվինա, Պեչորա, Ուր, Յենիսեյ, Լենա, Ամուր, Ուրալ, Ռիտն, Գուռ, Արաքս (կարողանալ հիշտ ցույց տալ քարտեզի վրա)։

7. Լճեր. Կազոգա, Ունգա, Բայկալ, Կասպից ծով, Արալյան ծով, Սեվանա լիճ (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա)։

2. ԽՍՀՄ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿՁՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր պետութեան լայնածավալութիւնը։ Նրա տեղադրութիւնը ցուրտ և բարեխառն ջերմային գոտիներում։ ԽՍՀՄ բնական պայմանների բազմազանութիւնը կլիմայի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի տեսակետից։ Սրանց գոտիական (զոնալ) տեղադրութիւնը։

ԲԵՎԵՌՈՒՄԻՆ ԳՈՏԻ (ԿԱՄ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՑԱԼ ՈՎԿԻՆՈՍԻ ԳՈՏԻ)

1. Բեվեռային գոտու ընդհանուր բնութեան տեսքը (կարողանալ տարբերել բեվեռային լանդշաֆտը նկարի վրա, ճանաչել այն պատկերավոր նկարագրութեամբ, նկարագրել այն համառոտակի։

2. Բեվեռային գոտու դիրքը քարտեզի վրա (կարողանալ հիշտ կերպով ցույց տալ բեվեռային գոտին ԽՍՀՄ բնական գոտիների քարտեզի վրա)։

3. Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս։ Կղզիներ. Նոր Յերկիր, Ֆրանց Իոսիֆի Յերկիր, Հյուսիսային Յերկիր։ Թերակղզիներ. Կուրայի, Չուկոտյան։ Ծովեր. Բարենցի, Կարայի (կարողանալ հիշտ կերպով ցույց տալ բեվեռային գոտու կղզիները, թերակղզիները և ծովերը)։

4. Կլիմայի դաժանութիւնը։ Շատ յերկարատև ձմեռ. բեվեռային գիշեր։ Ձնային փոթորիկներ, ուժեղ քամիներ, խիստ սառնամանիքներ։ Կարճատև ամառ. յերկար բեվեռային ցերեկ։ Սառուցներ ծովի և ցամաքի վրա։

5. Կենդանիներ. փոկեր, ծովացուլեր, սպիտակ աքեր, կետեր։ Այս կենդանիների առանձնահատկութիւնները, վոր հնա-

բավորութիւնն եւ տալիս նրանց ապրելու բեկեռային ծովի պայմաններում:

6. Գազանորսութիւնն ու ձկնորսութիւնը առաջ և հիմա:

7. Բեկեռային յերկրների բնակչութիւնը:

8. Նավագնացութեան պայմանները Հյուսիսային ծովերում: Հյուսիսային ծովային ճանապարհ: Մեր եքսպեդիցիաները Հյուսիսային Սառուցյալ ուղիանոսն ուսումնասիրելու գծով: Բեկեռային կայանները: Սառցահատների, ինքնաթիռների և ռադիոյի գերը բեկեռային գոտու յուրացման գործում: Հյուսիսային բեկեռի յուրացումը խորհրդային ավիացիայի և խորհրդային զինականների կողմից: «Հյուսիսային բեկեռ» կայանի գրեյֆը:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳՈՏԻ

1. Տունդրայի բնդհանուր տեսքը (կարողանալ տարբերել տունդրայի լանդշաֆտը նկարի վրա, ճանաչել այն պատկերավոր նկարագրութեամբ, նկարագրել այն համառոտակի):

2. Տունդրայի գոտու գերքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով ցույց տալ տունդրայի գոտին ինՊՆՄ բնական քարտեզի վրա):

3. Քարտեզով պարզել տունդրային մակերևութի բնույթը:

4. Տունդրայի գոտու գետերը:

5. Տունդրայի կլիմայի յուրահատկութիւնը: Յերկարատե և խիստ ձմեռ. ուժեղ սառնամանիքներ և քամիներ, ձյան ծածկույթի աննշանութիւն. բեկեռային գիշեր: Կարճատե ամառ. բեկեռային ցերեկ: Հավիտենական սառցապատում:

6. Տունդրայի բուսականութիւնը. մամուռներ, քարաքոսեր, հատապտուղներ—լուամրգի, մորի. թզուկ ծառեր—կեչի, ուռնի: Ինչո՞ւ տունդրայում բացակայում եւ փայտաբուն բուսականութիւնը:

Տունդրայի հարավային ծայրամասի (անտառատունդրայի) բնդհանուր տեսքը:

7. Տունդրայի կենդանական աշխարհը: Տունդրայում մշտապես ապրող կենդանիները. հյուսիսային յեղջերու, բեկեռային աղվես, խառուտիկ, բեկեռային կաքավ: Այս կենդանիների առանձնահատկութիւնները, վոր հնարավորութիւնն են տալիս նրանց ապրելու տունդրայի դժգոհ պայմաններում:

Տունդրայի կենդանացումը ամառը: Միջատների առատութիւն: Ձկների առատութիւնը գետերում: Չվող թռչունների մեծ բազմութիւն՝ վայրի բազեր, սագեր, կարապներ:

8. Տունդրայի ժողովուրդները. նենեցներ, լուորավետլաններ: Նրանց տարածումը տունդրայում (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա թե՛ վորտեղ են ապրում այդ ժողովուրդները յուրաքանչյուրը):

Նրանց բնակարանները, կենցաղը: Տունդրայի բնակչութեան կուլտուրական հետաքննութիւնը ցարական տիրապետութեան ժամանակ: Այդ բնակչութեան շահագործումը վաճառականների, չինոյիկներ, շամանների և «ուղղափառ» տերտերների կողմից:

Խորհրդային իշխանութեան հոգատարութիւնը տունդրայի ժողովուրդներին կուլտուրական զարգացման և կենցաղի բարելավման ուղղութեամբ, (կուլտ կայաններ, ֆակտորիաներ—առևտրականներ, հիւանդանոցներ, դպրոցներ): Կրօնական նախապաշարմունքները և շամանութիւնը վորպէս տունդրայի ժողովուրդների տնտեսութեան, կուլտուրայի և կենցաղի բարելավման խոչընդոտներ: Իրանց հաղթահարումը:

9. Տնտեսութեան տիպիկ ճյուղերը տունդրայում. յեղջերավարութիւն, ձկնորսութիւն, վորսորդութիւն: Բնակչութեան թափառումները՝ յեղջերուների համար հարմար արոտավայրեր գտնելու նպատակով: Տունդրայի տնտեսութեան վերակառուցումը, այդ տնտեսութիւնը վարելու տեխնիկայի բարելավումը: Յեղջերավարութեան նաև վորսորդական կոլտնտեսութիւնների և խորհրտնտեսութիւնների կազմակերպումը: Մերձբեկեռային հողագործութեան զարգացումը:

10. Ոգտակար հանածոների հետախուզութիւնն ու մշակումը տունդրայում: Արդյունաբերութեան շինարարութեան պատկերներ տունդրայում: Ինչպէս եւ փոխվում տունդրան արդյունաբերական նորակառույցների մերձակայքում:

11. Հաղորդակցութեան ճանապարհները տունդրայում: Յերկաթուղային կապի անբավարարութիւնը: Գիտային ճանապարհների և ողային ճանապարհների զարգացումը:

12. Քաղաքներ և նավահանգիստներ. Մուրմանսկ, Կիրովսկ:

ՏԱՅԳԱՅԻ ԳՈՏԻ

1. Բնության պատկերները տալգայի գոտում (կարողանալ տարբերել տալգան նկարի վրա, ճանաչել այն պատկերավոր նկարազրույթյամբ, նկարազրել այն համառոտակի):
2. Տալգայի գոտու գիրքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով ցույց տալ տալգայի զոնան ԽՍՀՄ բնական գոտիներն քարտեզի վրա):
3. Պարզել քարտեզի վրա, թե ինչ բնույթ ունի մակերևւոյթը տալգայի գոտու տարրեր մասերում:
4. Տալգան հատող գետերը: Լճեր:
5. Տարբերել տալգայի կլիմայի ընթացիկ կողմերը տունդրայի կլիմայից. ձմռան ավելի կարճ տևողություն, ավելի տաք ամառ: Տալգայի կլիմայի փոփոխվելը արևմուտքից—արևելք: Չրմոսան խստությունը Սիբիրում: Վերխոյանսկ-ցրտի բևեռ: Հնոսավոր Արևելյան տալգայի կլիմայի առանձնահատկությունները (ավելի տաք և խոնավամառ):
6. Տալգայի հողերը:
7. Տալգայի բուսական աշխարհը. սոճի, յեղեմնի, խիժափիճի մայրի, սպիտակ յեղեմնի: Չահիճներ, Տորֆավայրեր:
8. Տալգայի կենդանական աշխարհը. սկյուռ, աքիս, նապաստակ, աղվես, դայլ, արջ, լոս. Թռչունները—սալամբ, անտառաաքլոր, խլահավ:
9. Տալգայի սակավ բնակվածությունը: Տալգայի բնակիչները. կարելներ, եվենկներ, յակուտներ ուսներ (կարողանալ քարտեզի վրա ցույց տալ, թե վորտեղ են այդ ժողովուրդներն ապրում), նրանց բնակարաններն ու կենցաղը: Տալգայի ժողովուրդների կուլտուրական հետաքննությունը, շահագործումը՝ վաճառականների, չինովնիկների և տերտերների կողմից անցյալում: Խորհրդային իշխանություն հոգատարությունը տալգայի ժողովուրդների կուլտուրական զարգացման և կենցաղի բարելավման գործում (կուլտ-բաղաներ, ֆակտորիաներ, հիվանդանոցներ, դպրոցներ): Կրոնական նախապաշարունակները և շամանությունը վորպես խոչընդոտ տալգայի ժողովուրդների անտեսություն, կուլտուրայի և կենցաղի բարելավման գործում: Նրանց հաղթահարումը ներկայումս:
10. Տնտեսության հիմնական ճյուղերը տալգայում: Անտառագործությունը (անտառի հատում և լաստառաքում) առաջ և

հիմա: Անտառապտույտության գործարաններ: Անտառանյութի առաքումը դեպի արտասահման՝ Հյուսիսային ծովային ճանապարհով և դեպի յերկրի ներսը՝ Վոլգա, Կամա և այլ գետերի վրայով: Վորսորդություն. սկյուռի, աքիսի և այլ կենդանիների վորս: Արդյունագործության պրիմիտիվ ձևերից անցումն դեպի աղվամաղ գաղանների բուծմանը՝ բուծարաններում:

11. Հողագործություն և կաթնասնամանապահություն:

12. Ոգտակար հանածոների հետախուզությունն ու արդյունահանումն առաջ և այժմ: Տալգայի գոտու կարևորագույն ոգտակար հանածոները. քարածուխ, նավթ, դրաֆիտ, վոսկի, աղեր: Տալգայի արդյունաբերական նորակառույցների պատկերներ: Ինչպես և փոխվում տալգան արդյունաբերական նորակառույցների մերձակայքում:

13. Յերկաթուղային ցանցի անբավարարությունը: Քարտեզի վրա գտնել տալգայով անցնող յերկաթուղագծեր:

Գետերի նշանակությունը վորպես հաղորդակցության ճանապարհներ: Ընկեր Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքը:

15. Քաղաքները. Արխանգելսկ, Իգարկա, Բերեզնիկի, Վերխոյանսկ:

ԽՍՀՄ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏԻ

1. Լանդշաֆտի բնդհանուր պատկերը խառն անտառների գոտում (կարողանալ տարբերել խառն անտառների գոտու լանդշաֆտը նկարի վրա, ճանաչել այն պատկերավոր նկարազրույթյամբ, նկարազրել համառոտակի):
2. Խառն անտառների գոտու գիրքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով ցույց տալ խառն անտառների գոտին ԽՍՀՄ բնական գոտիները քարտեզի վրա):
3. Պարզել մակերևույթի բնույթը խառն անտառների գոտու քարտեզի վրա:
4. Խառն անտառների գոտին հատող գլխավոր գետերը:
5. Խառն անտառների գոտու կլիմայական առանձնահատկությունները: Նրանց տարբերությունը տալգայի գոտու կլիմայական առանձնահատկություններից—ավելի կարճատև ձմեռ, ավելի տաք և յերկարատև ամառ, տեղումների ավելի մեծ քանակ:
6. Խառն անտառների գոտու հողերը:

7. Բուսականութիւնը՝ յեղեւնի, կաղնի, թղլի, լորի, կաղա-
մախի, կեչի: Ճահիճների և տորֆահողերի տարածումը:

8. Սառն անտառների գոտու բնութեան փոփոխվելը մար-
դու տնտեսական գործունեւութեան հետեանքով. անտառների
մաքում, ճահիճների չորացում, հողերի ոգտագործումը ցանքերի
համար, քաղաքների, ֆաբրիկաների և գործարանների շինանրա-
րութիւն:

9. Սառն անտառների գոտու խիտ բնակվածութիւնը: Քա-
նակով գերակշռող ժողովուրդները—ռուսներ և բելոռուսներ: Բե-
լոռուսական Սորհրդային սոցիալիստական հանրապետութիւն
(կարողանալ ցույց տալ քարտեզի վրա):

Կուլտուրայի արագ վերելքը և կենցաղի բարելավումը խոր-
հրդային իշխանութեան որոք:

10. Սառն անտառների գոտում արդիւնաբերութեան զար-
գացումը: Ոգտակար հանածոների արդիւնահանութիւնը. գորշ
քարածուխ, տորֆ, յերկաթահանք: Գործարաններն ու ֆաբրի-
կաները խառն անտառների գոտում առաջ և այժմ:

11. Գյուղատնտեսութիւնը. հացահատիկային և բանջարանո-
ցային կուլտուրաներ. տեխնիկական կուլտուրաներ (վուշ). կաթնա-
նասնապահութիւն: Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերա-
կառուցումը Սորհրդային իշխանութեան որոք:

12. Յերկաթուղագծերի խիտ ցանց: Մոսկովյան յերկա-
թուղային հանգույցը (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա):
Նավարկութիւնը Վոլգա, Ոկա և Մոսկւա գետերով: Վոլգայի
միացումը Բալթիկ ծովի հետ ջրանցքներով (Մարինյան ջրային
սխտմ): Մոսկւա-Վոլգա ջրանցքը (կարողանալ ցույց տալ ջրա-
յին ճանապարհները քարտեզի վրա):

13. Քաղաքները. Մոսկւա, Լենինգրադ, Կիյեւ, Մինսկ,
Իվանովո, Գորկի, Կալինին, Կազան (կարողանալ ցույց տալ քա-
տեզի վրա):

ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ՅԵՎ

ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

1. Անտառատափաստանի ընդհանուր տեսքը վորպես փո-
խանցիկ գոտի անտառների և տափաստանների գոտիների միջև:
Սեւհողային տափաստանների ընդհանուր տեսքը (կարողանալ
տարբերել տափաստանը նկարի վրա, ճանաչել այն պատկերա-
վոր նկարագրութեամբ, նկարագրել այն համառոտակի):

2. Սեւհողային տափաստանների և անտառատափաստան-
ների գոտու զիրքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով
ցույց տալ սեւհողային տափաստանների և անտառատափա-
տանների գոտին ՍՄՀՄ բնական գոտիների քարտեզի վրա):

3. Քարտեզով վորոշել սեւհողային տափաստանների և
անտառատափաստանների գոտու մակերևութի բնութիւնը:

Սեւհողային տափաստանները և անտառատափաստանները
հատող գետերը:

5. Պարզել սեւհողային տափաստանների և անտառատա-
փաստանների գոտու կլիմայի բնորոշ տարբերիչ գծերը խառն
անտառների գոտու կլիմայից. կարճատեւ և ավելի մեղմ ձմեռ՝ ձնա-
յին մրրիկներով, տաք և յերկարատեւ ամառ՝ մթնոլորտային տե-
ղումների զգալի ընդհատումներով:

6. Սեւհողը վորպես այս գոտում ամենից շատ տարածված
հողի տեսակ:

7. Սոսկան սեւհողային տափաստանների պատկեր: Սխտ խո-
տային ծածկույթ: Տափաստանային խոտեր-փետրախոտեր: Սո-
տային ծածկույթի փոխվելը գարնանից դեպի ամառն ընկած ժա-
մանակաշրջանում՝ շոգերի ու ծեղանալու և խոնավութիւնը պակա-
սելու կապակցութեամբ:

8. Սեւհողային տափաստանների կենդանական աշխարհը. մի-
ջատների առատութիւն, կրծողների մեծ քանակ, վորոնք կե-
րակրվում են բուսականութեամբ և ապրում են հողե բներում.
տափաստանային թռչուններ (արոսներ):

9. Անտառատափաստանային և սեւհողային տափաստան-
ներում բնութեան փոփոխվելը մարդու տնտեսական գործու-
նեւութեան ազդեցութեան տակ. մշակված դաշտեր—նախկին խո-
պան տափաստանների վայրում, քաղաքների, ֆաբրիկաների և
գործարանների շինարարութիւն:

10. Անտառատափաստանների խիտ բնակվածութիւնը. խիտ
բնակվածութիւն նաև սեւհողային տափաստանների զգալի մա-
սում: Քանակով գերակշռող բնակիչներ. ուկրաինացիներ, ռուս-
ներ (կարողանալ ցույց տալ Ուկրաինական ՍՄՀ-ն քարտեզի
վրա):

11. Տնտեսութեան հիմնական ճյուղերը. հացահատիկային
հողագործութիւն (ցորեն), բոստանաբուծութիւն, բանջարա-
բուծութիւն, այգեգործութիւն (անտառատափաստանում): Սառն

անտառներին գոտուց տարբերվող գյուղատնտեսական կուլտուրաները. յեզիպտացորեն, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ, ծխախոտ բամբակ:

Գյուղատնտեսության վերակառուցումը սեահողային տափաստաններում և անտառատափաստանում, խորհրդային իշխանության որոշ. մասը գյուղացիական տնտեսություններից անցումն կոլտնտեսությունների, խորհրդատնտեսությունների. ՄՏ կայանների կազմակերպումը:

12. Ոգտակար հանածոներ. քարածուխ, (Դոնբաս) յերկաթահանք (Կրիվոյ Ռոգ, Կերչի թերակղզի): Նոր գործարանների շինարարությունը:

Դնեպրոդեսը և նրա նշանակությունը ՈՒՍՆ-ի տնտեսության մեջ (կարողանալ ցույց տալ Դնեպրոդեսը քարտեզի վրա):

13. Հաղորդակցության ճանապարհները սեահողային տափաստանների և անտառատափաստանների գոտում: Յերկաթուղագծերի խիտ ցանց. նավարկութուն՝ Դնեպր, Վոլգա, Դոն գետերով: Դնեպրի սահանքների վոջնացումը խորհրդային իշխանության որոշ:

14. Քաղաքները—Նարկով, Զապորոժյե, Ռոստով-Դոնի վրա, Ստալինգրադ:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

1. Բնության պատկերներ չոր տափաստանների գոտում (կարողանալ տարբերել չոր տափաստանները նկարի վրա, ճանաչել պատկերավոր նկարագրությամբ, նկարագրել համառոտակի):

2. Չոր տափաստանների գոտու դիրքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով ցույց տալ չոր տափաստանների գոտին ՆՍՀՄ բնական գոտիների քարտեզի վրա):

3. Պարզել քարտեզով չոր տափաստանների գոտու մակերևույթի բնույթը:

4. Չոր տափաստանների գոտու գետերը:

5. Չոր տափաստանների գոտու կլիմայի տարբերությունը սեահողային տափաստանների և անտառատափաստանների գոտու կլիմայից. ավելի կարճատև և ցուրտ ձմեռ, ավելի շոգ և չոր ամառ, հաճախ փչող խորշակներ:

5. Նոսր խոտային ծածկույթ: Բնորոշ խոտերը (բարձմենակ, աղաբույսեր): Բուսականության փոխվելը գարնանից դեպի ա-

մառն ընկած ժամանակաշրջանում՝ շոգերի ու ծեղանալու և ողի չորության ավելացման հետևանքով:

7. Չոր տափաստանների կենդանական աշխարհը. միջատների առատություն, մողեսների, կրիաների և ոճերի մեծ քանակություն, վորոնք կարողանում են լավ գլխավորվել շոգերին և չորությանը. մեծ քանակությամբ գետնասկյուռներ և ճագարամկներ. խոշոր կենդանիներ, վորոնք կեր գտնելու համար մեծ տարածություններ են կտրում-անցնում (սայգակներ):

8. Չոր տափաստանների սակավ բնակվածությունը: Չոր տափաստանների բնակիչները. կալմիկներ, կազախներ (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա կալմիկների և կազախների բնակավայրերը): Նրանց կենցաղը: Նրանց շահագործումը բայերի և չինովնիկների կողմից անցյալում: Տափաստանային քոչվորների կյանքի բարելավումը խորհրդային իշխանության որոշ: Կազախական խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

9. Չոր տափաստանների տնտեսության հիմնական ճյուղերը: Քոչվոր անասնապահություն: Քոչվոր անասնապահությունից նստակեցության անցնելը:

10. Ոգտակար հանածոների հետախուզությունն ու արդյունահանումը: Քարածխի արդյունահանումը Կարագանդայում, պղնձահանքերինը՝ Բալխաշ լճի մոտ, նավթինը՝ Նմբա գետի շրջանում (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա): Արդյունաբերական նորակառույցների պատկերներ:

11. Յերկաթուղային ցանցի թույլ զարգացումը: Թուրքսիբը և նրա տնտեսական նշանակությունը (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա):

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏԻ

1. Բնության պատկերներ անապատների գոտում (կարողանալ տարբերել նկարի վրա անապատային լանդշաֆտը, ճանաչել այն պատկերավոր նկարագրությամբ, նկարագրել այն համառոտակի):

2. Անապատների գոտու դիրքը քարտեզի վրա (կարողանալ ճիշտ կերպով ցույց տալ անապատների գոտին ՆՍՀՄ բնական գոտիների քարտեզի վրա):

3. Քարտեզով պարզել անապատների գոտու մակերևույթի բնույթը:

4. Գլխավոր գետերը. Ամու-Դարյա և Սիր-Դարյա: Չորացող և ավազների մեջ կորչող գետերի մեծ քանակություն:

5. Անապատների գոտու կլիմայի տարբերությունը չոր տափաստանների գոտու կլիմայից. տեղումների անշաշնակություն, ոգի ել ավելի մեծ գործություն, բարեխառնության որակյան խիստ տատանումներ, շատ շոգ ամառ և խիստ, բայց կարճատև ձմեռ:

6. Անապատների գոտու կենդանական և բուսական աշխարհը: Անապատների բուսականության և կենդանիների առանձնահատկությունները:

7. Գետահովիտները վորպես ոաղիսներ անապատի մեջ:

8. Անապատների գոտու նոսր բնակչությունը: Նրա կենտրոնացած լինելը գլխավորապես գետահովիտներում: Անապատների գոտու բնակչության կուլտուրական հետաքննությունը ցարական Ռուսաստանում: Նրա շահագործումը հարուստների և չինովնիկների կողմից: Կրոնի (իսլամ) գերը վորպես աշխատավորությանը ստրկացնելու և շահագործելու գենք և մասնավորապես վորպես կանանց ստրկացնելու գենք: Անապատների գոտու բնակչության կյանքի պայմանների բարելավումը և կուլտուրական մակարդակի բարձրացումը Պորհրդային իշխանության ուրոք: Միտությունական խորհրդային սոցիալիստական հանրապետություններ կազմելը. Թուրքմենական-Աշխաբադ գլխավոր քաղաքով, Ուզբեկական-Տաշքենտ գլխավոր քաղաքով (իմանալ նրանց անունները և կարողանալ ցույց տալ քարտեզի վրա):

9. Տնտեսության տիպիկ ճյուղերը. քոչվորային անասնապահություն անապատում. հողագործություն, շերամապահություն և բամբակագործություն՝ գետահովիտներում և վոռգվող վայրերում:

Ինչպես և վերակառուցվում գյուղատնտեսությունը անապատային գոտում (արհեստական վոռգմամբ մշակվող տարածությունների ընդարձակումը, խոշոր բամբակագործության զարգացումը, կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների կազմակերպումը:

10. Արդյունաբերության զարգացումը անապատային գոտում: Անապատային գոտու ոգտակար հանածոները: Աղեր, ծծումբ: Նրանց մշակումը: Բամբակապտիչ գործարաններ, մետաքսամանարաններ, քիմիական գործարաններ, ծծումբի գործարան. արդյունաբերական նորակառույցների պատկերներ:

11. Ճանապարհների շինարարություն: Թուրքսիբը և նրա նշանակությունը անապատների գոտու տնտեսության զարգացման գործում:

12. Ինչպես և վոխվում բնությունը և բարելավվում բնակչության կյանքի պայմանները արդյունաբերական նորակառույցների մերձակայքում, ինչպես և արհեստական վոռգում անցկացված վայրերում:

ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻ

1. Մերձարևադարձային գոտու դիրքը—Ղրիմի Հարավային ծովափերը և Կովկասի Սև ծովյան ափերը (կարողանալ ցույց տալ քարտեզի վրա):

2. Քարտեզով պարզել Ղրիմի և Կովկասի Սևծովյան ափերի մակերևույթի բնույթը:

3. Ինչով և տարբերվում Ղրիմի Հարավային ծովափերի կլիման Կովկասի Սևծովյան ափերի կլիմայից: Ինչով և բացատրվում կլիմայի այդ տարբերությունը:

4. Ղրիմի Հարավային ծովափերի ընդհանուր տեսքը (կարողանալ տարբերել այն նկարի վրա և պատկերավոր նկարագրություն, նկարագրել համառոտակի):

5. Ղրիմի հարավային ծովափերի բուսական և կենդանական աշխարհի բնույթը: Ղրիմի բուսականության առանձնահատկությունները չոր և շոգ ամառն առնչությամբ:

6. Ղրիմի Հարավային ծովափերի բնակիչները: Տնտեսության գլխավոր ճյուղերը. այգեգործություն, խաղողաբուծություն, գինեգործություն: Պոշոր խորհրդային տնտեսությունների և կոլտնտեսությունների կազմակերպում:

7. Ղրիմի Հարավային ծովափերի կուրորտային նշանակությունը: Ուղքեր եյին ոգտվում այդ կուրորտներից առաջներում և ուղքեր են ոգտվում հիմա:

8. Կովկասի Սևծովյան ափերի բնության պատկերներ (կարողանալ տարբերել այն նկարի վրա և պատկերավոր նկարագրություն նկարագրել համառոտակի):

9. Բուսական և կենդանական աշխարհի բնույթը:

10. Կովկասի Սևծովյան ափերի բնակչությունը:

11. Տնտեսության գլխավոր ճյուղերը. հացամշակություն,

այգեգործություն, խաղողաբուծություն, գինեգործություն, ծխա-
խոտաբուծություն:

12. Իշպես ե մարդը բնությունն իրեն յենթարկում: Կո-
խիդայի դաշտավայրի ճահիճներն չորացումը Խորհրդային իշխա-
նության ուրոք: Թեյաբուծության, ցիտրուսյան բույսերի, յեթե-
բատունների լայն տարածումը մերձարևադարձային տնտեսու-
թյան մեջ:

13. Գաղաքներ՝ Բաթումի, Սուխումի: Փոթի նավահանգիստը:

14. Կովկասի Սևծովյան ափերի կուրորտային նշանակու-
թյունը:

ԽՍՀՄ-Ի ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Բնության, բնակչության կյանքի և տնտեսության պատ-
կերներ լեռներում:

1. ԽՍՀՄ-ի ամենաբարձր լեռները. Կովկասյան, Տյան-Շան,
Ալթայ, Պամիրի լեռնաշխարհ, Հայկական լեռնաշխարհ (կարո-
ղանալ ցույց տալ քարտեզի վրա):

2. Լեռների բարձրությունը ծովի մակերևույթից, Լեռնաշղ-
թաներ, հովիտներ, գագաթներ, լեռնանցքներ, կիրճեր (կարո-
ղանալ տարբերել դրանք նկարի վրա):

3. Լեռների բնության պատկերներ: Կլիմայի, բուսականու-
թյան և կենդանական աշխարհի փոփոխվելը լեռան տարբեր
բարձրություններում. ուղղաձիգ գոտիականություն: Ձնածածկ
գագաթներ: Սառցադաշտեր: Լեռնային գետեր:

4. Բնակչությունը Կովկասյան լեռներում: Լեռնցիների կեն-
ցաղն ու զբաղմունքը: Հողագործության զգալիությունները լեռ-
ներում: Անասնապահություն:

Լեռնցիների զրույթյունը ցարական կարգերի ժամանակ, լա-
վաբույն հողերի վրայից նրանց դեպի սարերը քշելը, նրանց
կղզիացած վիճակը, կուլտուրական հետամնացությունը:

5. Փոփոխություններ լեռնցիների տնտեսության մեջ և
կենցաղում Խորհրդային իշխանության ուրոք: Հովիտների վոդո-
զում: Ճանապարհների շինարարություն: Ոգտակար հանածոների
արդյունահանություն: Ելեկտրիֆիկացիա: Լեռնցիների կուլտու-
րական մակարդակի բարձրացումը:

6. Ուրալի բնության պատկերներ: Նրա բարձրությունը:
Ուրալի տնտեսական նշանակությունը (կարողանալ ցույց տալ
Ուրալը քարտեզի վրա):

7. Միութենական խորհրդային սոցիալիստական հանրապե-
տություններ. Վրացական, Հայկական, Ադրբեջանական, Տաջի-
կական, Կիրգիզական:

8. Քաղաքները. Թբիլիսի, Ֆերևան, Բաքու, Ստալինաբադ,
Ֆրունզե, Դուշնի, Մաքսիմոգորսկ, Ստալինսկ:

3. ԽՍՀՄ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ բնակչության ընդհանուր քանակը: Նրա աճի արա-
գությունը:

ԽՍՀՄ ազգային կազմի բազմազանությունը: Միութենական
խորհրդային սոցիալիստական հանրապետություններ և նրանց
կենտրոնները: Միութենական հանրապետություններից յուրաքան-
չյուրի մակերևույթի կազմությունը, գլխավոր գետերը, բնական
գոտիները, ոգտակար հանածոները և տնտեսության հիմնական
ճյուղերը (վորպես կրկնություն ԽՍՀՄ-ի գոտիական ուսումնասի-
րության ժամանակ անցած ուսումնական նյութի): ԽՍՀՄ-ն վոր-
պես յեղբայրական հանրապետությունների ՄԻՈՒԹՅՈՒՆ:

4. ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐՏԵՋԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վճի աշխարհամասերում են տեղադրված հետևյալ պետու-
թյունները. ԱՄՆ, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան,
Իսպանիան, Ճապոնիան, Չինաստանը: Իմանալ այս պետությու-
նների անունները և կարողանալ ցույց տալ համաշխարհային քա-
ղաքական քարտեզի վրա:

Այս պետություններից յուրաքանչյուրը ԽՍՀՄ-ի վճի կողմն
և գտնվում: Ի՞նչ ճանապարհներով կարելի չե գնալ այդ յերկրները:

Ի՞նչպես ե կոչվում այդ յերկրներից յուրաքանչյուրի մայ-
րաքաղաքը և վորտեղ ե գտնվում (կարողանալ ցույց տալ քա-
րտեզի վրա):

Վճի աշխարհամասերում են գտնվում խոշորագույն կապի-
տալիստական պետությունների գաղութները: Կարողանալ ցույց
տալ (ըստ գունավորման) աշխարհի քաղաքական քարտեզի վրա:
Իմանալ անունները և ցույց տալ քարտեզի վրա Անգլիայի տի-
րապետությունները — Հնդկաստան, Ավստրալիական միություն,
Կանադա, Հարավ-Աֆրիկյան միություն. Ֆրանսիայինը — Ալժիր.
Ճապոնիայինը — Կորեյա:

ՀՀ Ազգային գրադարան



NL0928180

13 НОЯ. 1938

526

11

28763

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

40